

**ՔԱՂԵՈՍ ԱՎԴԱԼԵԳՅԱՆԻ «ԶՐԻ ԿՌԻՎԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ IX ԴԱՐՈՒՄ»
ԱՆՏԻՊ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ**

1985 թ. հոկտեմբեր ամսին հանրապետության դիտական հասարակայնությունը նշեց մեծանուն հայ գիտնական, տնտեսագետ, պատմաբան, գրականագետ, բառարանագետ, Կ. Մարքսի «Կապիտալի» և քաղաքատնտեսական այլ գործերի թարգմանիչ, հրապարակախոս ու հասարակական գործիչ Թադևոս Ավդալբեգյանի ծննդյան 100-ամյակը:

Թադևոս Ավդալբեգյանը, հիրավի, բեղմնավոր ու լայն դիպագուն ունեցող գիտնական էր: Նա ծանրակշիռ ավանդ է ներդրել գիտության այն բոլոր ոլորտներում, որտեղ գործել է նրա պրպտող միտքը: Թ. Ավդալբեգյանի մահից բավական անց պարբերականներում սկսեցին լույս ընծայվել նրա մի շարք հոդվածներն ու զեկուցումները, որոնցից էին «Զվարթնոցի շուրջը», «Խորենացու «Պատմության» ժամանակաբանության սկզբնագիրը վերականգնելու նոր փորձ», «Ար-ի-Քուրան ջրանցքը Պարսկաստանում և համանուն արիքուրան հարկը», «Գլխահարկը Թուրքիայում 17—18-րդ դարերում հայ պատմագիտության տվյալներով» և այլ գործեր: Հետազոտում նրա նշված և մյուս ուսումնասիրությունները ամփոփվեցին «Հայագիտական հետազոտություններ» սովորածավալ հատորի մեջ (1969 թ.):

Սակայն Ավդալբեգյանի լատիսկ մնացած ժառանգությունը կարող է նրա արդեն հայտնի նկարագրին նոր դիմագիծ հաղորդել, գիտական դիպագունի ընդգրկունությանը՝ նոր ծավալ, մաստակի զնահատման որակական նոր մոտեցում ցույց տալ: Մենք նկատի ունենք Քրիստոնեական հին և հայոց շարժական տոմարի աղյուսակները, «Հայ գրավոր նումերացիայի զարգացման ուրվագիծ», «Սեանա լճի մասնակի դատարկումը 7-րդ դարում», «Կայսերի զները 15-րդ դարում», «Նոր Բայազդի հին անունները», «Տնտեսական զարգացման պատմություն», «Վիլհելմ Վունդտի տեսությունը», «Խոշա Սահրատի առևտրամատյանը» և այլ գործեր: Նշված և մյուս աշխատությունները հրապարակման և արժեքավորելու համար դեռևս սպասում են, ինչպես ինքը կասեր, իրենց շարունակատակ Կոլումբոսին:

Ստորև տպագրվող հրապարակումը Թ. Ավդալբեգյանի զեկուցումն է, որ նա 1930 թ. հունվարի 11-ին կարդացել է ՀՍՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի պատմա-հասարակական բաժնի նիստում և մտադիր է եղել լույս ընծայել:

ԱՐԱ ՄԱՐԿՈՍՅԱՆ

**ԶՐԻ ԿՌԻՎԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ IX ԴԱՐՈՒՄ
ԱՌԱՋԱՔԱՆԻ ՀԱՄԱԿՆԱՐԿԸ**

1. Հայաստանի պատմության հիմքը նրա տնտեսական զարգացման պատմությունն է:

2. Հայաստանի տնտեսական զարգացման նախկին շրջանները, գլխավորապես պատմական շրջանները, գյուղատնտեսության վրա են հիմնված գլխավորապես:

3. Հասարակական տնտեսության հիմքը հողն է. նախկին շրջանների ուսումնասիրության հիմքը հողային հարցի, հողային հարաբերությունների հարցի ուսումնասիրությունն է:

4. Տնտեսագիտորեն հողի մեջ մտնում է նաև ջուրը: Հողային հարաբերությունների մեջ մտնում են և ջրային հարաբերությունները:

5. Ուրեմն Հայաստանի տնտեսական զարգացման պատմության մեջ մեծ տեղ պետք է բռնե հողային հարաբերությունների, ուրեմն և ջրային հարաբերությունների, զարգացման պատմությունը:

¹ Տե՛ս ՀնՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի «Տեղեկագրի» 1931 թ. № 5-ում տպագրված «Նոր Բայազդի հին առանձին ու շրջակայքի ոռոգման հեռանկարները» ուսումնասիրության առանձնատիպի վերջում Թադ. Ավդալբեգյանի՝ տպագրության պատրաստ և լույս տեսնելիք աշխատությունների ցանկի № 36 կետը: Սույն հրապարակման աստղանիշով տրված ծանոթացությունները Թ. Ավդալբեգյանին են, իսկ համարներով տրվածները՝ մերը: Լ. Խաբեր 4—5

6. Հայաստանի ոռոգման պատմության աղբյուրները.
 ա. մատենագիրներ,
 բ. հիշատակարաններ,
 գ. վիճառականագրեր,
 դ. նյութական մնացորդներ (առու, ջրանցք ևլն),
 հ. ավանդություններ, սովորություններ ևլն:
 7. Վիստրճանագրերի մեջ նյութեր շատ կան:
 8. Վիճարճանագրերի գիտական հրատարակություն չկա, ուսումնասիրություններ առանձին արճանագրությունների նույնպես պակասում են:
 9. Վիճարճանագրերի տեքստը վերականգնելու և մեկնաբանելու անհրաժեշտությունը:
 10. Մի էջ Հայաստանի ջրային հարաբերությունների պատմությունից՝ բնագիտներին հատուկ մանրախույզ ուսումնասիրությամբ:

Ա.

Արուճի 867 թվականի արճանագրի ընդօրինակումներ հրատարակված են հետևյալ տպագիր աշխատությունների մեջ.

1. Հովհաննես Ե. Ե. Շահաթունեանց Շահրիարցի, Ստորադրութիւն կաթողիկէ էջմիածին և հինգ Գավառացն Արարատայ, հ. 2, Վաղարշապատ, 1842, § 384, էջ 61,
 2. Ղևոնդ Ալիշան, Այրարատ, բնաշխարհ Հայաստանաց, Վենետիկ, 1890, էջ 144,
 3. Միթար վ. Տեր-Մկրտչյան, Իմ գործակալության ժամանակ հավաքած մի քանի արճանագրություններ.—Արուճ, § 3 ու 4. լույս է տեսել «Բանասեր» հանդեսում, Պարիս, 1903, էջ 26—27,
 4. Կոստանյան Կ., Վիճական տարեգիր-ցուցակ ժողովածոյ արճանագրութեանց հայոց, Biblioteca Armeno-Georgica, II Ս—Պետերբուրգ 1913, էջ 5, արճ. 869 թ (1 ժր) ու
 5. Գարեգին վ. Հովսեփյան, Քարտեզ հայ հնագրության, Վաղարշապատ, 1913, § 12, էջ 11, լուսատիպը՝ տախտակ Ժ, № 12: Տպագրված է նաև «Շողակաթ» ժողովածուի մեջ, Վաղարշապատ, 1913, էջ 177, § 12, լուսատիպը՝ տախտակ Ժ, № 12:
- Սակայն Արուճի արճանագրի մի ընդօրինակում, բացի վերոհիշյալներից, գտնում ենք նաև մեկ անտիպ երկի մեջ, որ է.
6. Հրաչյա Աճառյան, Արճանագրությունների հավաքածու գրված 1903—1913 թվականների արանքում, սովոր հատոր, չհամարագրված առանձին թերթ, «Թալիշ, 3 ժ2=867» վերնագրով*:

* Մոտ 2.000 արճանագիր պարունակող արճեքավոր այս ձեռագիր ժողովածուն բանասեր-լեզվաբան հեղինակը հանձնել է Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեին: Ընկ. Հրաչյա Աճառյանի սիրահոգար թուղթովությամբ ժողովածուն մի առ ժամանակ իմ տրամադրության տակ դրեց կոմիտեի գիտնական քարտուղար ընկ. Աշխարհբեգ Քալանթարը: Պարտք եմ համարում երկսին էլ հրապարակավ հայտնել շնորհակալությունս: Աճառյանի այս գործը, որ դժբախտաբար թերի է մնացել, այս վիճակում անգամ չատ առավելություններ ունի Կոստանյանցի «Վիճական տարեգրի» համեմատությամբ: Հավաքածուն նախաձեռնելու և թերի թողնելու հանգամանքների մասին տեսե՛ք Հրաչյա Աճառյան, Հայոց գրերը, «Ազգային մատենադարան», գիրք ԿԹ, Վիեննա, 1928, էջ 147—148, ծանոթ. 1 (պետք է լինի էջ 347—348, որովհետև էջ 346-ի և 349-ի միջև էջերի համարակալումը սխալ է—Ա. Մ.): Հավաքածուի ժամանակը սահմանում ենք մոտավոր հաշվով այսպես. նրանում հիշված է 1903 թ. «Բանասերը». «Հայոց գրերի» հիշյալ ծանոթության մեջ ասված է, որ հավաքածուն կազմելուց «ժամանակ մը» հետո չույս տեսավ «Վիճական տարեգիրը»: Վերջինս հրատարակվել է 1913 թվականին. չստացնորդվելով օժամանակ մը արտահայտությամբ վերջնակետ թողնենք նույն 1913 թվականը: Այսպիսով, հավաքածուի ժամանակաբանական սահմաններ կունենանք 1903—1913:

Ուսումնասիրվող արձանագիրը փոփոխականների երկու խումբ ունի: Առաջին խումբը վիմարձանագիրը տալիս է թերատ՝ ընդօրինակումը դադարեցնելով նույնիսկ նախադասության կեսին—«զինչ իւրեանց» բառերի վրա: Այս խմբին են պատկանում՝

S = Շահխաթունյանինը,

A = Ալիշանինը,

t = Տեր-Մկրտչյանի առաջին փոփոխակն ու

K = Կոստանյանինը:

Երկրորդ խմբի անդամները, թեև ճշտության տարբեր աստիճաններով, տալիս են ամբողջ վիմարձանագիրը լրիվ, հասցնելով մինչև «պատուհասի» բառը: Սրանք են՝

T = Տեր-Մկրտչյանի երկրորդ փոփոխակը. այս մեր կարծիքով կազմված է տարբեր ժառուռ ունեցող երկու կտորից, որ նշանակում ենք T_1 ու T_2 ,

H = Հրաչյա Աճառյանինն ու

J = Հովսեփյանինը:

Բ

Հիշածս հեղինակներից Շահխաթունյանն արձանագիրն ընդօրինակել է անձամբ: Արուճ այցելելով. ընթերցումը յուրն է:

Ալիշանն օգտվել է Շահխաթունյանից, բայց ունեցել է ուրիշ աղբյուր էլ, հավանորեն՝ թղթակցական: Այս երևում է նրանից, օրինակ, որ Շահխաթունյանի բերած ՅԺԸ թվականի փոխարեն նա տալիս է ճիշտը ՅԺԶ, կամ թե նրա «մին թանիվաճ առեցին» ընթերցվածի փոխարեն տալիս է «մին թաթի վաճառեցին» ևլլն:

Տեր-Մկրտչյանն ընդօրինակել է անձամբ՝ տալով վիմարձանագրի երկու փոփոխակ—թերատ ու լրիվ: Շատ զարմանալի է, որ նա այս երկու փոփոխակները ներկայացնում է իբրև տարբեր արձանագրեր: Սրա վրա հիմնվելով՝ Աճառյանն Արուճի հիշյալ թերթիկում գրել է. «Այս արձանագրությունը երկու օրինակ քանդակված ըլլալու է. առաջին օրինակն ունին Շահխաթ. Բ. էջ 61, Ալիշանն, «Այրարատ», էջ 144 և Մխ. վ. Տեր-Մկրտչյան, «Բանաս. 1903, էջ 26: Երկրորդ օրինակը, որ առաջինն քիչ մը ավելի երկար ու ամբողջական է, հրատարակեց Մխ. վ. Տեր-Մկրտչյան, անդ. էջ 27, առանց մտադիր ըլլալու երկուքին նույնություն»:

Մեր կարծիքով, Տեր-Մկրտչյանի՝ երկու փոփոխակներն իբրև տարբեր արձանագրեր ներկայացնելը շփոթման ու թյուրիմացության հետևանք է:

Ուշագրավ են հետևյալ հանգամանքները: Տեր-Մկրտչյանի թերատ փոփոխակը, որ Շահխաթունյանի ու Ալիշանի բերածների նման վերջանում է «զինչ իւրեանց» բառերի վրա, ունի ընթերցումներ, որ նա հիշյալների գրքերից քաղել չէր կարող. այսպես օրինակ, նրանց «կաթուղիկոսութեան», «...է...ճ...ար Արուճ», «ի քրթավաքին» կամ «ի Քրթավաքին», «ծառա Սմբատա»² ընթերցվածների փոխարեն Տեր-Մկրտչյանն ունի «կաթաղիկոսութեան», «ի Հարարուճ», «ի Քրթավանին», «ծառա Սմբատա Բագրատունոյ», «Հայոցս» ու «Վառամայ»: Պարզ է, որ սրա ընդօրինակումը նոր է, իրոք անձամբ կատարված: Այնուհետև. Տեր-Մկրտչյանի լրիվ վարիանտը ժամանակաբանորեն անգրանիկ լրիվ վարիանտն է, և ուրեմն իբրև ամբողջություն նախորդ աղբյուրներից քաղված չէր կարող լինել, այլ վերցրած է անմիջապես վիմարձանից: Սակայն տարակուսելի գուգադիպություն. Տեր-Մկրտչյանի լրիվ վարիանտի առաջին մասը (այսինքն մինչև «զինչ իւրեանց» բառերը) կատարելապես նույնանում է

² Ալիշանի «Այրարատում» տպագրված է «Քրթավաքին» ու «Սմբատա»: Այս Ե-երը տպագրարձային են և օրանց ընթերցումից Ավգալիսյանը հրաժարվել է:

Ալիշանի վարիանտի հետ՝ մի տառ անգամ շտաբերվելով նրանից³։ Դժվարընթեռնի վիմարձանագրի այսքան նման ընդգրկնակում, որ կատարված լինի անկախորեն, հավանական չէ. մնում է ընդունել, որ լրիվ վարիանտի առաջին մասը (մինչև «դինչ իւրեանց») արտագրված է Ալիշանից, իսկ մնացածը, որ Ալիշանից արտագրվել չէր կարող, ընդգրկնակված է բուն վիմարձանից։ Մենք ենթադրում ենք հետևյալը. Տեր-Մկրտչյանն առանձին թերթիկների վրա արտագրել է 1) Ալիշանի վարիանտը (T_1), 2) վիմարձանագրի յուր ընդգրկնակումն Ալիշանի վարիանտի սահմաններում (և) և ապա էլ՝ 3) վիմարձանագրի շարունակությունը մինչև վերջ (T_2)։ Հետո, նա փոխանակ 2-րդ ու 3-րդ թերթիկները միացնելու, որով կստացվեր ամբողջ արձանագիրը յուր ընթերցումներով, իրար հետ կպցրել է 1 ու 3-րդ թերթիկները, որով յուր ընդգրկնակածի վերջին մասը միացել է Ալիշանի վարիանտին՝ դառնալով մի վիմարձանագիր, իսկ յուր ընդգրկնակած առաջին մասն էլ, որ բավական զգալի տարբերություններ ունի սրանից, ներկայացրել է իբրև անկախ արձանագիր։ Այսպիսով, Տեր-Մկրտչյանը փոխանակ մեզ տալու միացյալ ու ամբողջական ($T_1 + T_2$) և ամենեկին մեջ շեղելու T_1 , տվել է է ու $T_1 + T_2$ ։

Աճառյանն, ինչպես ինքն է գրում, արձանագրի բնագիրը կազմել է Շահախաթունյանի, Ալիշանի ու Տեր-Մկրտչյանի արձանագրությանց համեմատությամբ... լավագույն ձևերը ընտրելով⁴։ Երբ Աճառյանը կազմում էր «Արձանագրությունների ժողովածուն», Հովսեփյանի աշխատությունը, որ նաև լուսատիպի հիման վրա արված, ճշտագույն ընթերցվածներ ունի, դեռ հրատարակված չէր։ Սակայն և այսպես, Աճառյանը երկու շատ աջող ուղղում է տվել. «է...ճ...ար Արուճ» ու «ի Հարարուճ» ընթերցումների փոխարեն նա կարդացել է «հհար Արուճ» և Տեր-Մկրտչյանի անհասկանալի ՌՍՍՏԵՐ(?) լր(?) ընթերցվածը սրբագրել է այսպես. «պետք է կարդալ ռասմ էր լել, այսինքն ռասմ (արաբ. ռասմ = սովորութիւն)» էր լեւալ⁵։ Այս ուղղումները հետագայում հաստատվեցին փառավորապես։

Կոստանյանցը, իբրև յուր աղբյուրներ հիշատակելով միայն Շահախաթունյանին ու Ալիշանին, վիմարձանագրի բնագիրը տվել է՝ նրանց ընթերցվածներից ընտրություն անելով։ Սակայն անհրաժեշտ է նշել, որ նա զօրախոսաբար լոկ այսքանով չէ բավականացել, այլ արձանագիրը սրբագրել է՝ հիմնվելով դարձվածքների, հատուկ անունների հանրահայտի ձևերի ու ուղղագրական կանոնների վրա։ Այսպես, օրինակ, հակառակ յուր աղբյուրների, որոնք ունեն «թուականին», «կաթուղիկոսութեան», «Կոշ», «զԿոշա», «վառամա» կամ «վառամա», «ծառա», «Սմբատա», նա տվել է հետևյալ դրականորեն սրբագրած ընթերցումները՝ «թուականիս», «ի կաթողիկոսութեան», «Կաւշ», «զԿաւշ», «զԿաւշայ», «Վահրամայ», «ծառայ», «Սմբատայ»։ Այսպիսի վարմունքն անշուշտ անթույլատրելի է բնագիրը հարազատորեն վերարտադրելու գիտական պահանջի տեսակետից։


Հովսեփյանը «Վիմարձանագիրը» վերարտադրել է գրական աղբյուրների տվյալներից անկախ՝ անձամբ տեղում ու լուսանկարի հիման վրա վերծանելով։ Նրա վերծանությունն ու տված բնագիրը, ինչպես ասացինք, լավագույնն է բոլոր եղածների միջից։

Ահա Արուճի արձանագրի վերարտադրությունների փոխհարաբերության գրաֆիկ պատկերը, որտեղ ընդգծված տառերով տպագրված են բուն հուշարձանից արված ընդգրկնակումները (տե՛ս գծ. 1)⁶։

3 Ալիշանի ընթերցվածում տպված է «քագրատունոյ» և «ծառա», Տեր-Մկրտչյանի տարբերակում՝ «բագրատունոյ» և «ծառայ»։

4 Աճառյանի որակած «անհասկանալի բառեր»-ից ՌՍՍՏԵՐ(?) -ի անհասկանալիությունը, տպագրական խոտանի հետևանք է, որտեղ բացակայում են երկրորդ տառի՝ Ա-ի աջ մասնիկը և հատկապես, չորրորդ տառի, Մ-ի ձախ սյան կեսը։

5 Ներկայացնում ենք Հովսեփյանի ընդգրկնակածի հիման վրա Ավգալբեգյանի կազմած համեմատական աղյուսակը։



Հավելումների ընդգրկման կառուց.

1. ՅժՁ թուականին Հայոց յի
2. խանութի Առտոյ եւ ի տերութի Սմբատայ
3. Հայոց ասպարապետի Բագրատունոյ եւ ի կաթագիկս
4. սուրբի Զաքարիայի եղբւ կոիւ ընդ Յարուն եւ ընդ Կոշ եւ
5. ընդ գաւառն. Լհար Արուն զԿոշ եւ զգաւառն եւ կալաւ
6. զԿոշա վանականն եւ ի Քրթավանին ընդ անկին մինթա
7. նի վաճառեցին. ես Գրիգոր որդի Վառամա ծառա Ս
8. մրատա Բագրատունո եկի Հրամանաւ Սմբատա եւ ես
9. հաւասարեցի զչորն ընդ Կոշ եւ ընդ Յարուն զին
10. չ իւրեանց բնիկ ոստմ էր լել :Ա: եւ կէս Կոշա եւ :Ա:Արճ
11. ո. արդ եթէ այլ ոք հակառակել շանա այլ աւելի ո
12. ասմ յուղէ :ՅժՁ: սուրբ Հայրապետացն նզել լիցի եւ
13. ի Սմբատա մահուամբ լթաց! պատուհասի,

Աղիզալբեգյանի կազմած աղյուսակը:

1. S յ ժ ը (869), K ՅժՁ.
1. K թուականին
- 1—2. SAITHK յիշխանութեան
2. SAITHK ի տերութեան
3. SATHK Հայոց, t Հայոցս
3. SAITHK ասպարապետի
3. SAH Բագրատունոյ, t Բագրատունոյ, TK Բագրատունոյ
- 3—4. SATH ի կաթագիկոսութեան, K ի կաթագիկոսութեան
4. S Զաքարայի,
4. S յԱրուն, ATHK Արուն
4. S ը Կոշ, K ընդ Կաշ
5. AITK Գաւառն
5. St . . ճ. արարուն, A . . լ . . ճ . . ար Արուն, t ի Հարարուն, T . . լ . . ճ . . ար Արուն, K լ . . ճ . . ար Արուն
5. S զԿոշ, K զ Կաշ
5. S զգաւառն, ATK զ Գաւառն, t զ Գաւառն
5. SAITHK կամաւ
6. K զԿաշայ
6. S ի Քրթավան, A ի Քրթավան (տե՛ս Ժան. 3—Ա. Մ.), TK ի Քրթավան, H ի Քրթավան
6. K ընդ Անկին
- 6—7. S մին թանկմաւ աւեցին, ATH մին թաթի վաճառեցին, tK մին թանկ վաճառեցին
7. S վառամա, tH Վառամայ, K Վառամայ
7. THK Ժառայ

Գ

Գալով պարագաների նկարագրությանն ու որոշմանը՝ պետք է ասենք, որ արձանագիրը հրատարակողներից միմիայն Շահխաթունյանն ու Ալիշանն են նկարագրում Արուճի ս. Գրիգոր եկեղեցին, որի վրա քանդակված է այն:

Իսկ թե շենքի որ մասումն է գտնվում արձանագիրը, ցուցմունքները տարբերվում են: Ըստ Շահխաթունյանի, արձանագիրը քանդակված է «ի ներքս անդր յորմն հարաւային» (II, 61): Ալիշանը, սրանից քաղելով, ցույց է տալիս «ի ներքս ի հարաւային որմունսն» (144): Աճառյանն էլ սրանց համաձայն գրում է. «եկեղեցւոյն հարավային պատին վրա, ներսեն»: Հովսեփյանն ավելի մանրամասն է տեղորոշում: Նրանից իմանում ենք, որ արձանագիրը, ճիշտ է, եկեղեցու հարավային կողմի մի որմի վրա է ներսից, բայց ոչ թե բուն հարավային պատի, այլ «ձախ դասի արևմտեան պատի արեւելեան երեսին» («Շողակաթ», 177 յ⁶):

Արձանագրի տառերի տեսակի որոշումը տալիս է միմիայն Աճառյանը՝ գրելով, թե երկաթագիր են: Նրա աղբյուրները չունեն այսպիսի մի ցուցմունք: Ունեցե՞լ է նա մի ուրիշ աղբյուր, բացի յուր հիշածներից, թե գրել է ի լրո, դժվարանում ենք ասել: Սակայն Հովսեփյանի հրատարակած լուսատիպը ցույց է տալիս, որ արձանագրի տառերն իրոք երկաթագիր են՝ պատկանելով վերջնիս զարգացման հին շրջանին, երբ տառերի սյուններն իրար միանում են կամարաձև գծերով: Հնագրական մի փոքրիկ դիտողություն արձանագրի մասին ունի Հովսեփյանն էլ, որը բնագիրը տալուց հետո ավելացնում է. «Ուշադրության արժանի են երկրորդ ու երրորդ՝ տողերի մեջ լինել վերջավորութեան պատուով կամ կրճատ գրությունները, հնագույնը հայ սղագրության մեջ, բացի «Ած, Քս» բառերից»:

Արձանագրի բովանդակության մասին խոսել են միմիայն Ալիշանն ու Աճառյանը: Առաջինն այն բնորոշել է լակոնաբար իբրև «...կարևոր ի դեպս ժողովրդական...», իսկ երկրորդը յուր «Եհար Արուճ» ուղղումը հիմնավորելու դիտումով գրել է.

Ջուրի կռիվ մը եղած է Արուճի, Կոշի ու գավառի միջև. Արուճը զարկեր է Կոշն ու գավառը. Կոշին վանքին վանականներն ու Քրթավանքին վանականները ստիպվեր են դատարկ, անարժեք (այսպես պետք է հասկնալ անկի՞ն բառը) թափով մը ծախել իրենց ջուրը. Գրիգորը եկեր, նախկին կարգը վերականգնեց էն:

Ահա այն բոլոր տեղեկությունները, որ մենք Արուճի 867 թ. արձանագրի վերաբերմամբ գտնում ենք հայ տեղագրական-բանասիրական-հնագիտական

7—8. K ՄՃբառայ

8. SATK շենքն—Բաղրատուն, լԻ Բաղրատունայ

8. K ՄՃբառայ

9. S ԸԳՂուրն

9. S Ը Կ-2, K ԸՆԳ Կ-12

9. S Ը յԱբուլ, ATHK ԸՆԳ Աբուլ

10. SAK Իւրեանց . . . , ի Իւրեանց, SAK Իւրեանց բառից հետո ընդհատվում են

10. T ԴՍՍՏԵՐ (?) լիլ (?) հարցախնդրելը T-ին են.

11. T արդի թէ

11. TH հակառակ է ջանա

11—12. TH ալլ . . . լինի Յու . . . Գ ի ՅԺԸ

13. TH մահու ի . . . պատահաբ:

6 Արձանագիրը գտնվում է ձախ դասի՝ հարավային պատից ելուստվող արեւելյան որմնամասի թի արեւելյան երեսին:

7 Պետք է լինի շորթորդ:

գրականութեան մեջ: Որքան գիտենք, նույն արձանագրի մասին մինչև օրս որևէ մենագրական ուսումնասիրութիւն հրապարակված չէ եղել ո՛չ հայերեն ու ո՛չ լ.լ օտար լեզուներով:

Դ

Արձանագրի ներքին կողմի քննութեան անցնելիս առաջին հարցը ժամանակաբանութեան հարցն է, այսինքն այն հարցը, թե որ թվականին է եղել ջրի այս նշանավոր կոիվը:

Շահխաթունյանն ու սրանից քաղող Կոստանյանը հայկական տարեթիվ գնում են յժը՝ սրա դիմաց նշանակելով քրիստոնեական 869 թվականը: Սրանց հակառակ Ալիշանը, Տեր-Մկրտչյանը՝ սրանցից քաղող Աճառյանն ու վերջում էլ Հովսեփյանը հայկական տարեթիվ գնում են յժը: Լուսատիպը ցույց է տալիս, որ այս յժը. ընթերցվածն անվիճելի է: Ալիշանը, չգիտենք ինչպես այս դեպքում վրիպելով հայոց յժը. թվականը համապատասխան է համարում 869 թվականին, որն անկասկած սխալ է: Քրիստոնեական 869 թվականին համապատասխանում է հայկական տոմարի ոչ թե մեկ, այլ երկու տարի, ավելի ճիշտը՝ երկու տարվա կտորներ՝ = այս հաշվով:

Հայոց յժէ (317) թ. = 868 ապրիլի 23—869 ապրիլի 22,

»-» յժը (318) թ. = 869 ապրիլի 23—870 ապրիլի 22:

Ուրեմն քրիստոնեական 869 թվականին համապատասխանում են հայոց յժէ ու յժը. թվականները, քայց ոչ ամենեին յժը թվականը:

Տեր-Մկրտչյանը հայոց յժը թվականին համապատասխանող քրիստոնեական տոմարի տարեթիվը չէ տալիս, իսկ Աճառյանն ու Հովսեփյանը նշանակում են 867: Թեև, կլոր հաշիվ անելով, վերջինս ճիշտ է, $316 + 551 = 867$, բայց և այսպես ջրի կոլի այն թվականը, որ տալիս է արձանագիրը, տոմարագիտորեն ու ըստ էության ավելի ստույգ որոշվելու կարիք ունի:

Քրիստոնեական տոմարի առաջին հազարամյակի ընթացքում հայկական տոմարի տարեթիվը միշտ համապատասխանում են քրիստոնեական տոմարի երկու տարվա կտորներին: Քիչ վերևում մենք տեսանք հայոց յժէ (317) ու յժը (318) թվականների վերաբերմամբ: Նույնը պետք է ասել, անշուշտ, նաև հայոց յժը (316) թվականի մասին էլ: Վերջինս սկսվում է քրիստոնեական տոմարի 867 թվականի ապրիլի 24-ին ու վերջանում 868 թվականի (նահանջ տարվա) ապրիլի 22-ին*: Ըստ այսմ հայոց յժը (316) թվականը համապատասխան է ոչ թե 867, այլ 867—868 թվականներին: Սակայն ջրի կոիվը չէր կարող տեսած լինել քրիստոնեական այս երկու թվականներին էլ: Արգ, ո՞ր թվականին կարող է պատահած լինել այն:

Այս կգտնենք՝ եթե նկատի ունենանք, առաջին՝ թե հայոց յժը (316) թվականին համապատասխանող ամիսները քրիստոնեական որ թվականին են ընկնում ու հետո այն, թե որ ամիսներին ջրի պակասություն և ուրեմն ջրի համար եղող կոիվ հավանական է Արագածի լանջերում:

Հայոց 316 թվականին համապատասխանող քրիստոնեական 868 թվականին ամիսներ լինում են հունվարը, փետրվարը, մարտն ու ապրիլը: Այս ամիսներից առաջին երեքում Արագածի լանջերն անպայման ձյունապատ են, և ուրեմն երկրագործական աշխատանք, վար ու ցանք, հետևաբար և ջրի կոլի հնարավոր չէ: Մնում է ապրիլը: Եթե այս ամսին աչս ու այն տեղ հողը բացվի էլ և վար ու ցանք լինի, ջրի կարիք չի զգացվի, որովհետև այս ամսվա ընդհանուր ձյունհալքի ու վարարումների միջոցին ջրի պակասությունն անհրաժեշտ չի բան է Արագածի վրա ու մերձակայքում:

Մնում է 867 թվականը՝ ապրիլից դեկտեմբեր ամիսներով:

Ակներև է, որ ջրասակավ եղանակներն—ամառն ու աշունը—ընկնում են այս թվականին, և ուրեմն հայոց 316 թվականի ջրի կոլի միակ հնարավոր տարի մնում է նույն թվականը:

* Dulaurlie, Recherches sur la chronologie armenienne, Paris, 1859, p. 385.

Այսպիսով, 869 թվականը վերանում է ինքնրստինքյան, քանի որ նրա հիմքը՝ յժը ընթերցվածը, սխալ է պարզապես, 868 թվականը մերժվում է՝ հայոց 316 թվականին միմիայն ձմեռային՝ ու մասամբ էլ գարնանային հատված ունենալու պատճառով և ուրեմն IX դարում Հայաստանի մեջ պատահած ջրի կռվի՝ ժամանակաբանորեն ու ըստ էության ստուգված տարի մնում է 867 թվականն իբրև հայոց 316 թվականի ամառնային ու աշնանային հատվածների պարունակող տարի:

Ե

Բաղմադարյան սովորության համաձայն, արձանագիրը դեպքի ժամանակը որոշում է ոչ միայն տարեթվով, այլև իշխողների անունների հիշատակությամբ: Նրանցից իմանում ենք, որ ջրի կռիվը եղել է «յիշխանութիւն Աշոտոյ», որն, անշուշտ, իշխանաց իշխան ու ապա թագավոր Աշոտ Ա. Բագրատունին է: Սրա իշխանության ժամանակաբանությունն ուսումնասիրելու տեսակետից Արուճի արձանագրի թվականը մի կարևոր նշանաձող է: Հոգևոր հիերարխիայի գծով ժամանակը գրած է «ի կաթողիկոսութիւն Զաքարիայի», որը, անկասկած, հայտնի Զաքեցիին է: Իշխանի ու կաթողիկոսի կողքին հիշված է մի երրորդն էլ. «ի տերութիւն Սմբատայ Հաոց ասպարապետի Բագրատունոյ»:

Շատ հավանական է, որ Աշոտի ժամանակ սպարապետություն անող այս Սմբատը հենց նույն Աշոտի որդի և ապա թագաժառանգ Սմբատ Ա թագավորն է, որն այսքան վաղ՝ յուր գահ բարձրանալուց մոտ 25 տարի առաջ, արդեն սպարապետ էր երկրում: Սակայն այստեղ կա մի ուշագրավ հանգամանք. արձանագիրը, ժամանակը սահմանելով, ոչ թե գրում է «յասպարապետութիւն Հաոց Սմբատո Բագրատունոյ», այլ ասում է «ի տերութիւն Սմբատայ Հաոց Բագրատունոյ»: Ուրիշ խոսքով, Սմբատը հիշվում է ոչ թե այն պատճառով, որ նա այն ժամանակվա սպարապետն էր, այլ նրա համար, որ 316=867 թվականին «տերութիւն» անողը նա էր՝ միևնույն ժամանակ Հայոց Սպառապետը լինելով: Արձանագիրը շեշտը դնում է ոչ թե «ասպարապետ» բառի, այլ «տերութիւն» բառի վրա, ուստի և Սմբատի՝ այս ջրի կռվում հայտաբերած իրավատարի, դատավորի ու կարգադրիչի դերը պետք է կապել ոչ թե նրա սպարապետ լինելու հանգամանքի, այլ այն պարագայի հետ, որ «տերութեան» իրավունքը նրանն էր:

Ի՞նչ պետք է հասկանալ այստեղ «տերութիւն» բառի տակ:

Սրա առաջին իմաստը, որ է՝ «ստորադաս իշխանություն» մատնանշում էն հետևյալ ղուգահեռ հատվածները:

- 1) ...Հերակղի բարեյաղթող թագաւորի եւ յիշխանութեան... ամենագով պատրիկի Կուրապաղատ...իս...եւ յեպիսկոպոսութեանն Թէոփիղոսի եւ ի Թանուաթեանն Ներսէհի Շիրակայ եւ Արշարունեաց տեառն... [Մրեն, 670 թ. «Վիմական տարեգիր» (այսուհետև՝ «Վիմական»—Ա. Մ.), 2].
- 2) «...ի կաթողիկոսութեան տեառն Խաչկա եւ ի թագաւորութեանն Սմբատա եւ ի յասպարապետութեան Գրիգարի եւ յիշխանութեան Աշոտո... (Կոշ, 981, «Վիմական», 9).
- 3) «ի թագավորութեան Յիվանէսի Շահանշահի եւ հայրապետութեան տեառն Պետրոսի, հայոց վերադիտողի, եւ ի Թեոփեան Սարգսի, արեւելից դուկիս... (Տեկոր, նձէ 1036, «Վիմական», 20).
- 4) «ի աշխարհակալութեան Աղրունին (sic! Թ. Ա.) պարոնեութեան Խոշաբին (1284—1291 թթ., «Շողակաթ», «Ձափանից ժողովրդ», 24).

5) «յաշխարհակալութեան Արդունին, իշխանութեան հոշաքին» [Գ. վ. Հովսեփյան, «Խաղբակյանք կամ Պոռոյանք Հայոց պատմության մեջ», մասն I (այսուհետև՝ «Խաղբակյանք»—Ա. Մ.), 142]։

6) «ի դանութն Հասան բէկին... եւ մերում նահանգի պրնութես պրն Զումին» (1473 թ. «Խաղբակյանք», 234)։

7) «ի դանութն Պայանդուր Հասան բէկին... ի յիշխանութն պրն Զումին» (1476 թ., «Խաղբակյանք», 236)։

Այս բոլոր հատվածներում էլ ընդգծած բառերը ցույց են տալիս ավելի բարձր կանգնած քաղաքական իշխանավորներին ենթակա մի ստորադաս իշխանություն, որի անմիջական իրավասության տակ էր գտնվում հիշված այս կամ այն վայրը, հիմնարկը, անձը ։ Հասկանալի է, որ ընդգծած բառերի մեջ նշանակություններ կատարյալ նույնություն չկա, բայց անհերքելի է իմաստների նմանությունը*։

Սակայն «տերություն» բառն ունեցել է մի ուրիշ նշանակություն էլ, այսինքն՝ ցույց է տվել ոչ միայն քաղաքական իշխանություն, այլև տնտեսական գույքային իրավատիրություն։ Տերը ոչ միայն քաղաքական իշխանավոր էր, այլև կալվածատեր։

Բառի այս երկրորդ իմաստի մասին վկայում են, օրինակ, ներքևի քաղվածքները։

1) «...յառաջին ամի կաթողիկոսութեան տն Բարսղի եւ ի տէրութեան վանացս Գրիգորոյ և Սմբատայ...» (1195a, Հոռոմոս, «Վիմական», 38)։

2) «...ի հայրապետութեան տն Բարսղի և ի տէրութեան վանացս քրիստոսասեր պատրոնացս Գրիգոր Հեճպին և Սմպատայ...» (1198, Հոռոմոս, «Վիմական», 39)։

3) «...ի հայրապետութեան տ. Բարսղի և տէրութեան վանացս քրիստոսասէր պատրոնացն, Գրիգոր Հեճպին եւ Սմբատայ...» (1198, Տայլար, «Վիմական», 42)։

4) «...իշխանութն Բարեպաշտ Պապաքին եւ ի տերութն այսմ մենաստանի պարոն Դաւթի...» (1284, «Խաղբակյանք», 138)։

5) «իշխանութեան և տերութեան սուրբ ուխտիս աթաբեգ ամիր սպասալար պարոն Սաղունին»... («Շողակաթ», 27)։

Այս հատվածներում, որտեղ խոսքը վանքերի մասին է, տերություն բառը չի կարող քաղաքական իշխանության իմաստ ունենալ, այլ նշանակում է սեփականատեր։ Այս ամենն էլ զարմանալի չի թվալ, եթե հիշենք, որ միջին դարերում ինչպես ուրիշ երկիրների մեջ, այնպես և Հայաստանում կային վանքեր ու եկեղեցիներ, որոնք այս կամ իշխանի կամ հարստի մասնավոր սեփականություն էին։

Հաջորդ քաղվածքներում խոսքն արդեն վերաբերում է ոչ թե վանքերին, այլ զանազան վայրերի, որոնք նույնպես հիշվում են, իբրև «տերություն» օբյեկտներ։

1) «յաթաբակութն Սաղունին և ի տէրութն տեղայս ճարին» (1273 թ. «Շողակաթ», 26)։

* Որ «տերություն» բառն անմիջապես ունեցել է «պարոնություն» բառի իմաստ, կարելի է տեսնել այս քաղվածքը, որտեղ «ի մերում նահանգի պարոնության» փոխարեն կարգում ենք.

«ի թագավորութեան բարեպաշտ եւ ածասէր թագաւորին Հայոց Հեթմոյ՝ եւ ի մերոյս նահանգի տերութեան ԽՈՇԱՔԻՆ» (1297, «Շողակաթ», 25)։

- 2) «Յաշխարհակալութեան Արդուն զանին եւ ի թագավորութեան Գաւթի եւ հայրապետութեան տր Յովանիսի եւ ի աւերաբե տեղոյս պարոն Աշոտոյ... (1287, «Շողակաթ», 26).
- 3) «Ի յիշխանութեան և տէրութեան համօրին գաւառացս մեծ իշխանին Բուրթէլի և որդոց նորին Պէշգենի եւ Իւանէի, իսկ ի տեղոյս տեղաբե թոռանց մեծին Պոռշա Ամիր-Հասանա և Ջումայի» (1334 թ., «Խաղրակյանք», 202): Այս հատվածները հիշեցնում են Գրիգոր Մագիստրոսի՝ Հավուց Թառի արձանագրի, հայտնի խոսքը.

«...ի տեղացն աշխարհիս գանձագին արարի զվայրս սորա լերամբն եւ դաշտամբն...» (1013 թ., «Վիմական», 14):

Այս բոլոր օրինակներից հետո վերադառնալով Արունի արձանագրի «ի տեղութիւն Սմբատայ» արտահայտությանը՝ տեսնում ենք, որ այս համագործ է «ի տեղութիւն տեղոյս Սմբատայ» խոսքին: Վերջինս կարելի է թարգմանել «Սմբատի կողմնատիրության» կամ թե «տեղատիրության ժամանակ» բառերով: Այս դեպքում սրանց տակ հասկանում ենք այն, ինչ որ կհասկանալինք, եթե ժամանակով ավելի մոտ տեղմինով գրված գտնենք «ի պարոնություն» կամ «ի պատրոնություն Սմբատայ»:

Այսպիսով, վերահիշյալից պարզվում է, որ 867 թվականին, երբ տեղի էր ունենում Արունի ու Կոշի կռիվը ուղղման շրի համար, Արագածի լանջերի այս մասի պարոնը, կամ պատրոնը Սմբատ Բագրատունին էր*:

2

Ջրի կովի ու կովոզ կողմերի մասին արձանագիրը պատմում է «եղև կրուիվ ընդ Յարուն և ընդ Կոշ եւ ընդ գավառն»: Այս վերջին բառն Ալիշանը, Տեր-Մկրտչյանն (է ու Դ) ու Կոստանյանը համարել են հատուկ անուն և գրել գրության առում: Շահխաթունյանը, Աճառյանն ու Հովսեփյանը գրում են փոքրատառով՝ հասկանալով սրա տակ մեր սովորական գավառ բառը: Նույն բառը կրկնվում է արձանագրի մեջ քիչ հետո. «եհար Արուն զկոշ և զգավառն»: Այս երկրորդ դեպքում վերծանողների տարածայնություններն ավելի մեծ են: Շահխաթունյանը կարդում է «զգավառին», «Ալիշանը, Տեր-Մկրտչյանն (Դ) ու Կոստանյանը մի նոր ձևով հատուկ անուն դարձնելով գրում են «զԳավառին», իսկ Տեր-Մկրտչյանը յուր թերատ փոփոխակում (է) հատուկ անուն է դնում վերևի ձևով «զԳավառն»:

Ինչ է հասկացել Շահխաթունյանը «զգավառին» բառի տակ, դժվար է ասել. ինչ վերաբերում է Աճառյանին ու Հովսեփյանին, ապա սրանք էլի այն հասկացել են գավառ-մահալ-уезд իմաստով:

Լուսատիպի քննությունը ցույց է տալիս, որ 5-րդ տողում, «զգավառին» կամ «զԳավառին» ձևը թյուրատեսության արդյունք է. ճիշտ է «զգավառն» կամ «զԳավառն» ընթերցումը (հիշենք, որ երկաթագիրը մեծատառի ու փոքրատառի տարբերություն չունի), ինչպես որ կարդացված է նաև առաջին դեպքում: Ուրեմն վիճելի մնում է միմիայն այն, թե արդյոք երկու տեղումն էլ բառը հասարակ անուն է, թե՞ հատուկ անուն:

Մենք նրանց կողմն ենք, որոնք բառը հասկացել և կարդացել են իբրև հասարակ անուն: Մեր պատճառաբանությունն այս է:

Արունը և Կոշը կովել են, Արունը հաղթել է Կոշին և բռնի տիրացել սրա ջրին. Սմբատ Բագրատունին մարդ է ուղարկել և ջուրը բաժանել հին սովորության

* Տե՛ս համապատասխան ծանոթ. Խոշաբի մասին: Ուշագրավ է նաև հեղինակի հետևյալ դիտողությունը (Ա. Մ.). «Ըստ Մխիթար Գոշի, մահվան պատիժ տալու իրավունք ունի թագավորը, բայց ոչ իշխանը. Սմբատը իշխան էլ չէ, այլ կալվածատեր: Այդ արձանագիրը ցույց է տալիս, որ գավառները կամ ձեռնորդ մահվան պատիժ տալու իրավունք ունին: Հայ քրեական իրավունքի ու պատժական իրավունքի պատմության տեսակետից նշանավոր աղբյուր է այն»:

Համաձայն՝ ջրի 1 1/2 մասը հատկացնելով Կոշին ու 1 մասն էլ՝ Արուճին: Եթե ընդունենք, որ գավառ հատուկ անուն է, ապա դուրս կգա նախ, որ իրար հետ կովել են ոչ միայն Արուճն ու Կոշը, այլև մի երրորդ շինանիստ-Գավառը, որ շահագրգռված էր նույն ջրով: Երկրորդ՝ որ պարտվել է և զարկվել է ոչ թե մենակ Կոշն, այլև մյուս շինանիստը—Գավառը: Եթե կար շահագրգռված մի ուրիշ, երրորդ, անջատ միավոր, ապա նշանակում է, որ ջրբաժանության հին կարգը վերականգնելու դեպքում անպատճառ պետք է հիշվեր, թե Կոշի ու Արուճի կողքին որքան ջուր հատկացվեց այս երրորդ միավորին: Չէ՞ որ վերջինս էլ էր կովել, զարկվել և ուրեմն ներկայանում էր իբրև իրավահավասար հայցվոր (истец): Ինչու պետք է պարզ չսահմանվեր նաև սրա բաժինը:

Արձանագրի մեջ ջրբաժանության դեպքում ոչ մի հիշատակություն չկա մի երրորդ միավորի մասին: Սրանից եզրակացնում ենք, որ այս երրորդ միավորը սխալմունքով հնարված բան է: Չի եղել Գավառ անունով մի շինանիստ Կոշի կողքին, այլ խոսքը վերաբերում է միմիայն Կոշին ու սրա շրջակայքին: Եվ որովհետև խոսքը միմիայն Կոշի ու սրա շրջակայքի մասին է, ուստի ջրբաժանության ժամանակ հիշվում են Կոշն ու շրջակայքը միասին, իբրև միացյալ ջրօգտարկող (водопользователь): Վերջին դեպքում մենակ Կոշի հիշատակությունը չէ նշանակում, ջրի 1 1/2 մասը միմիայն Կոշ ավանին է հասնում: Ինչպես որ մեր օրերում մեկն ասե, օրինակ, թե Արաքսի ջրի 1 1/2 մասը հասնում է Երևանին ու 1 մասը Նախճավանին, այս չի հասկացվիլ այն մտքով, թե ջուրը միմիայն Երևան ու Նախճավան քաղաքներին է բաժին տված և ոչ թե սրանց շրջակա ավաններին ու գյուղերին էլ, այնպես էլ 867 թվի արձանագրի մեջ ջրբաժանության դեպքում միմիայն Կոշի հիշատակությունը չի բացասում այն, թե ջրից բաժին էր տրվում նաև վերջինիս շրջակայքին, որը հենց նշված է «գաւառ» բառով:

Հետաքրքրական է արձանագրի մեջ «գաւառ» բառի այս նոր առումն էլ: Ներկայումս գավառ բառը հայերենում նշանակում է վարչական մի բաժնական մեծ միավոր, որն անմիջապես փոքր է նահանգից և ընդգրկում է երբեմն մոտ հարյուր ավան, գյուղ ու ագարակ: Գավառից փոքր վարչական միավորն է գավառակը, որը յուր հերթին բաժանվում է գյուղախմբերի: Արուճն ու Կոշը հիմա գտնվում են ոչ միայն մեկ գավառում, այլև միևնույն գավառակում, ուրիշ խոսքով, նրանք միասին մեկ գավառակի մասեր են:

Այլ է «գաւառ» բառի նշանակությունն ըստ արձանագրի:

Սրա մեջ Կոշն ունի յուր գաւառը, որը ջրաբաշխորեն հարում է նրան:

«Գաւառ» բառն այս դեպքում, անկասկած, նշանակում է գյուղերի ու ագարակների անհամեմատ ավելի փոքր մի խումբ, որ օգտվում է միևնույն առվի ջրից, կամ թեև գավառ է կոչված հենց Կոշի հանդը՝ սրա վրա տեղավորված մի քանի ագարակներով միասին:

Այսպես թե այնպես, արձանագրի «գաւառ»-ը այժմյան գավառը չէ ու ոչ էլ գավառակն, այլ ամենաշատը՝ հոմանիս է հիմակվա գյուղախումբ բառին:

Ըստ այսմ պարզվում է, որ 867 թվականի ջրի կովում իբրև երկու պահանջատերեր հանգես են եկել մի կողմից՝ Արուճը—հիմակվա Թալիշն ու մյուս կողմից ոչ թե մենակ Կոշն, այլ Կոշի գյուղախումբը: Ահա այս գյուղախումբը բաժինն են կտրվում հափշտակել Արուճեցիք, բայց հետո ստիպված հետ են տվել նրանց՝ Սմբատ Բագրատունու մեծասաստ հրամանով:

Է

Ջրի կովում Արուճի տարած հաղթության ու հետևանքների մասին արձանագիրը պատմում է. «եհար Արուճ զԿոշ և զգաւառն և կալաւ զկոշավանականն»:

Բացի Հովսեփյանից մնացած բոլոր ընդօրինակողները «կալաւ»-ի փոխարեն կարդացել են «կամաւ»։ Ըուսատիպը ցույց է տալիս, որ վերջինս սխալ է և ճիշտն առաջինն է: Սակայն բոլոր հրատարակիչներն էլ շարունակությունը միակերպ են վերծանում՝ կարդալով «զկոշա վանականն»: Այս վերծանության մեջ արդեն մեկնաբանություն կա. բոլորն էլ այստեղ տեսնում են «վանական»

բառը, որ վանքի հոգևորական է նշանակում: Թե այստեղ «վանական» բառը նկատելով ամբողջ խոսքն ու շարունակությունն ինչպես են հասկացել, չգիտենք, որովհետև այս մասին նրանք ոչինչ չեն գրել: Միմիայն Աճառյանն է, որ պարզ գրել է, թե արձանագրի մեջ «վանական» բառը կարդալով, ինչպես է հասկանում ամբողջ խոսքը: «Արուճը,— բացատրում է նա,— զարկեր է Կոշն ու գաւառը. Կոշին վանքին վանականներն ստիպվել են... ծախել իրենց ջուրը»:

Ճիշտ է արդյոք Աճառյանի բացատրությունը:

Ո՛չ, և ահա թե ինչու:

Նախ, եթե Կոշի վանքի վանականները ծախել են իրենց ջուրը, ապա պարզ է, որ վանականները ենթակա են, ջուրը՝ լրացուցիչ. այս դեպքում «վանականները» պետք է տրված լինեին ուղղական հոլովով, իսկ լրացուցիչը՝ հայցական: Այնինչ տեսնում ենք, որ արձանագրի մեջ հենց «վանականներն» են դրված հայցական հոլովով (զվոշա վանականն = զվանականն Կոշա), հետևաբար ոչ թե սրանք են մի բան արել, այլ սրանց գլխին ուրիշներն են մի բան արել: Երբ վերանում է «կամա» ընթերցվածը և տեղը գրվում «կալա», ստացվում է մի կանոնավոր խոսք, որի ենթական, ստորոգյալն ու լրացուցիչը միանգամայն անվիճելի են:

«Արուճ... կալավ զվոշա վանականն», որ նշանակում է. Արուճը բռնեց Կոշա վանականին (կամ վանականներին):

Եթե մենք այս տողում անփոփոխ թողնենք «վանական» բառը, ապա հիշյալ խոսքին այլևս ուրիշ ոչ մի իմաստ վերագրել չի կարելի:

Բայց ամբողջ հարցն էլ հենց այս է, թե արդյոք ճիշտ են վարվում վերածանոցները, երբ արձանագրի մեջ տեսնում են «վանական» բառը:

Ամենից առաջ տարօրինակ է, թե ինչու Արուճի ու Կոշի կովի ժամանակ, երբ իրար են բաղխվել գյուղական հասարակությունները, խոսքը հանկարծ փոխվում է՝ դառնալով վանականներին:

Ինչու՞ պետք է հաղթող Արուճիք միմիայն վանականներին բռնեին ու նեղեին: Ինչքան հավանական է, որ վանականներն անցած լինեին մեկ հայցվորի կողմը—Կոշի կողմը: Պատմականորեն որքան՞ իրական բան է, որ միշին դարերում ոչ-կրոնական կամ ոչ-աղանդավորական հողի վրա, սոսկ ջրի հարցում հայ շինականները ոտ վերցրած լինեն ահարկու հոգևորականության վրա: Արդյոք այս թույլ կտային հենց բուն իսկ Արուճի մեծափարթամ վանքի վանականները: Վերջապես, հո Կոշի ջուրը մենակ Կոշի վանականներինը չէ՞ր, որ ևրանք հանդես գային իբրև մենաշնորհյալ իրավատերեր, կամ թե իբրև բացառապես տուժողներ:

Առեղծվածը լուծվում է, երբ մենք ձեռք ենք քաշում «վանական» ընթերցումսից և հիշում Կոշ գյուղի այն անունը, որ պահել է Մովսես Խորենացին:

Քերթողահայրը Տիրանի պատմությունն անելիս երեք անգամ հիշում է Կոշը Կուաշ անունով՝ սրա տեղը որոշելով «յոտին Արագած կոչեցեալ լերինն»*: Մակայն Խորենացին Կոշը հիշում է ոչ թե սոսկ «Կուաշ» անվանելով, այլ երեք անգամն էլ ասում է «աւանն Կուաշ» (Գ, ԻԲ, 281—283):

«եկեալ յաւանն Կուաշ»,

«ի նմին աւանի Կուաշ հրամայէ բնակել» ու

«ի նմին աւանի Կուաշ թաղեցաւ»:

Ինչպես արձանագիրն է ցույց տալիս, IX դարում Կուաշ անունն արդեն դարձել է Կոշ, ինչպես մեր օրերում ասում է հենց ժողովուրդն էլ: Սակայն արձանագրի մեջ ամեն տեղ սոսկ Կոշ չէ ասվում. մեկ տեղ, այն է հենց մեզ հետաքրքրող խոսքի մեջ գյուղի անունը պահված է նույն ձևով, ինչպես ունի Խորենացին. «աւանն Կուաշ»-ի փոխարեն արձանագիրն ունի Կոշավան (հմմտ.— Արշակավան, Զարեհավան, Սմբատավան ևլն): Ըստ այսմ մենք առաջարկում ենք կարդալ ոչ թե

«կալաւ զվոշա վանականն», այլ

* «Մովսես Խորենացի» («Պատմագիրք հայոց»), Տփղիս, 1913:

«կալաւ զԿոշավանականն» (կամ զԿոշավան-ականն):

Մեր կարծիքով, այս վերջին «ականն» էլ ոչ թե առանձին բառ է, այլ հայերեն «ական» ածանցն է հենց, որն ի միջի այլոց պատկանելություն է ցույց տալիս. այսպես օրինակ.

պետական = պետության պատկանող

սեպհական = սեպուհին պատկանող

գյուղական = գյուղին պատկանող

արքայական = արքային պատկանող

անձնական = անձին պատկանող ևլն:

Սրանց համաձայն էլ Կոշավան նշանակում է Կոշավանին պատկանող: Հետևաբար, «հայր Արուճ, զԿոշ և կալաւ զԿոշավանականն» նշանակում է «Արուճը զարկեց, հաղթեց Կոշին և տիրացավ Կոշավանին (այսինքն՝ Կոշ-ավանին պատկանող ջրին)»: «Վանականը» վերանում է միանգամայն և վայրկենապես ու պարզորոշ երևում են Արուճի ու Կոշի դերերն Արագածի լանջերում ջրի համար մղվող նշանավոր կռիվում:

Ը

Կոշավան բառին հաջորդում է մի բառ, որ Շահխաթունյանը տալիս է «ի քրթավաքին», Ալիշանը՝, Տեր-Մկրտչյանի լրիվ վարիանտն՝ ու Կոստանյանցն՝ «ի Քրթավաքին» ու Աճառյանն «ի Քրթավանքին» ձևերով: Վերջինս նույնիսկ սրան վանականներ է տալիս՝ գրելով «Կոշի վանքին վանականներն ու Քրթավանքին վանականները ստիպվե՞ր են... ծախել իրենց ջուրը»: Լուսատիպը հաստատում է Տեր-Մկրտչյանի համառոտ վարիանտի ու Հովսեփյանի ընթերցվածը՝ «ի քրթավանին», եթե համարենք, որ բառը հասարակ անուն է, կամ «ի Քրթավանին» եթե ընդունենք հատուկ անուն:

Կարծում ենք, որ այս բառի մեջ էլ պետք է նշմարել «ավան» բառը վե՛վա-գրությամբ քանդակած, ինչպես որ քիչ առաջ տեսանք «Կոշավան» անվան մեջ: Քրթավան բարդ բառի առաջին բառը կարող է լինել Քուրդ հատուկ անունը: Ժուրդիկ ու Քուրդ պատահում են մեր պատմիչների մեջ հայ անձնանունների շարքում դեռևս V դարից սկսած (Փարպեցի, Օրբելյան):

Այսպես ըմբռնելով՝ Քրթավան նշանակում է Քուրդ անունով մարզի գյուղ (դարձյալ հմմտ. Արշակավան, Ջարեհավան, Սմբատավան ևլն):

Բայց հիշյալ բառը կարող է նշանակել նաև մի ավան, որի բնակիչները քրդեր են:

Սակայն քուրդ ազգի անունով բարդված լինելու դեպքում էլ Քրթավանը կարող է նկատվել իբրև հատուկ անուն և գրվել գլխատառով, նման, օրինակ, Հոռոմոց մարզ կամ Մարաց մարզ անուններին:

Հայաստանի տարրեր մասերում դեռ հնուց հիշատակություններ կան քուրդ գյուղերի մասին: Մի օրինակ, XII դարից:

«Գրով էտ ի սուրբ Գրիգորս զայգին միջնաշինին ջրին, զՏեառնխաշ

Կոպավանից, ի միջին զՔուրդգեղանն, զԱբասաձորն, զՏանձուտն...»: ող = 1155, Հաղարծին, «Վիմական», 31 («Վիմականում» տրված է իբրև հատուկ անուն «զՔուրդգեղանն». նույնը՝ նաև անվանացանկում. Զալալյանցը «զՔուրդ գեղանն», էջ 135)⁹:

Մի այլ օրինակ XIII դարից.

«...և ետ պարոն Սահմադին զգեղն Մեծոփ իւր մզրայիւքն եւ խարհանիւք և քրդագեղեղովն...» (շխ = 1291, Արճեշ, «Վիմական», 133):

Քուրդ գյուղերը կոչվում են պարզապես «քրդանոց» էլ: Այսպես, Ալիշանը գրում է. «Երեւի և Քրդանոց մի լինել ի սահմանս Տաթևու, այսինքն տեղի բնակութեան Քրդաց, յորում էր և սրանց, որոյ հասից երկուքն վանացն էր և մին Քրդերուն» («Սիսական», 244):

⁸ Տե՛ս ծան. 2:

⁹ Զալալյանց Սարգիս վ., Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, Տիֆլիս, 1842:

Այսպիսով, պարզվում է, որ թե առաջին դեպքում (Քրդավան, եթե ընդունենք հատուկ անուն) ու թե երկրորդ դեպքում (Քրդավան, եթե հասարակ անուն համարենք), բառը ցույց է տալիս մի շինանիստ- (ավան, գյուղ կամ ագարակ): Տվյալ դեպքում այս շինանիստն Արուճին ու Կոշին սահմանամերձ էր IX դարում:

Հավագույն ապացույցը, որ Քրթավանն իրոք շինանիստ էր, տալիս է Բարխուդարյանի «Արցախ»-ը, որում գտնում ենք հենց նույն անունով մի գյուղ

.....Քրդեան գյուղ», էջ 371.

Ջրի համար մղվող հիշյալ կոնվեր շոշափում էր նաև Քրդավանի շահերը: Ներքևում կտեսնենք, թե ինչպես էր արտահայտվել այս շահերի շոշափումը:

Շարունակությունը վերծանելու համար մենք մի երկու բառ մեջ տանք՝ հետո անշուշտ էլի սրանց վերադառնալու պայմանով: Այնուհետև կարդում ենք ըստ Շահխաթունյանի՝ «մին թանիվաճ առեցին», ըստ Ալիշանի, Տեր-Մկրտչյանի լրիվ վարիանտի ու Աճառյանի՝ «մին թաթի վաճառեցին» ու վերջապես ըստ Հովսեփյանի «մինթանի վաճառեցին»:

Նախ դիտենք, որ Շահխաթունյանի «մին թանիվաճ առեցին» ընթերցվածն առանձին դնելն այնքան էլ աներկբա չէ.—«վաճ առեցին» այնքան էլ հեռու հեռու չէ տպված, որ անպատճառ, իբրև առանձին ըմբռնված բառեր կարծենք. նրանց արանքի փոքրիկ անջրպետը կարող է շարվածքի անփութության կամ անհարմարավետության հետևանք լինել:

Կոստանյանցը, որ բուն արձանագրից չէ քաղում, այլ այս դեպքում միմիայն Շահխաթունյանի տվածն է արտագրում, հենց այսպես էլ կարդացել է— «մին թանի վաճառեցին»: Այսպես նայելուց դուրս կգա, որ բոլոր հրատարակիչները համերաշխ են «վաճառեցին» ընթերցվածում: Եվ նրանք, անկասկած, իրավացի են:

Այս դեպքում իբրև տարբերակներ մնում են «մին թանի», «մին թաթի» ու «մինթանի»:

Բացի Աճառյանից, ոչ ոք չէ բացատրել, թե ինչ է հասկանում յուր տված փոփոխակի տակ: Աճառյանը բացատրում է այսպես. «Կոշի վանքին վանականներն ու Քրթավանքին վանականները ստիպվել են... թաժով մը ծախել իրենց շուրը»:

Հարցականը հենց իրեն լեզվաբանինն է: Սրանից երևում է, որ Աճառյանը դժվարացել է ասել, թե ինչ է նշանակում այդ «թաթ»՝ բառը, բայց նշում է, որ այն մի համարժեք է, որով ծախվել է շուրը: Լուսատիպը ցույց է տալիս, որ «թաթի» ընթերցվածը պատրանք է, բուն արձանագրում քանդակածը կարելի է կարդալ միմիայն «մինթանի» կամ «մին թանի»:

Միմիայն Հովսեփյան վարդապետն է, որ արձանագրում նշմարում է «մինթան» կամ «մինթանա» (սեռական՝ մինթանի): Մյուսները, թեկուզ առանց հիմնավորելու, կարդում են զատ-զատ «մին թանի»: Մենք այս ընթերցվածի կողմն ենք:

Ի՞նչ բան է այս «թանի»-ն:

Մեր կարծիքով, այս ոչ այլ ինչ է, բայց եթե թալին տեղանվան սեռական հոլով ԹԱՆԻ գրությունը կարելի է երկու բացատրություն տալ. մեկ՝ համարել, որ Լ տառը պարզապես բաց է թողել քանդակողը սխալմամբ, մի երևույթ, որ հազվագեղ չէ, երկրորդ՝ ընդունել բառի մեջ Թ-ին հաջորդող երկաթագիր Ա տառը քանդակողը ոչ թե իբրև սոսկ Ա է դրել, այլ իբրև Ա ու Լ գրերի միացում, փակագիր, որը նույնպես հաճախ է պատահում: Երկու դեպքում էլ ԹԱՆԻ—

* Եւրեմն սեռական թաթի, գործիական թաթով: Ի դեպ, Աճառյանի «Արմատական բառաբանը» բառերի շարքում այդ տարբերակներից ոչ մեկն էլ չունի:

ԹԱՆԻ: Այս տեղանվան նույնպիսի կրճատ կամ կրճատ փակագիր գրովյան մի նմուշ գտնում ենք հենց նույն Թալնի եկեղեցու մեկ արձանագրի մեջ
 «էտու ի սուրբ կաթողիկէի Թա ա (= Թալնա) (սվիմական», 21, արձ. 1040a):

Այսպիսով, նախկին չբացատրված կամ թե անհավանական ընթերցվածներին փոխարեն մենք ստանում ենք մի նորը՝

ԹԱՆԻ ԿԱՃԱՌԵՅԻՆ

Ի՞նչ ենք իմանում արձանագրի այս հատվածից:

— Ահա թե ինչ:

Արուճցիք կալում ու հաղթում են Կոշին ու գավառին, տիրանում են սրբանց ջրին՝ վերջինս իրենց հանգը տանելու միտումով: Բայց նրանք Կոշի ու գավառի ամբողջ ջուրը չեն տանում Արուճ, այլ մի մասը տալիս են Թալին գյուղին: Թալինն իբրև Արագածոտնի գյուղերից մեկն ու իբրև Արուճին ու Կոշին հանդակից՝ նույնպես կարող էր օգտագործել շրային խլված ֆոնդի մի մասը: Բայց Թալինը չէր մասնակցել շրի կովին և ուրեմն չէր կարող իբրև կովող բաժին ստանալ շրի ավարից: Արուճցիք, որ զենքով խեղդել էին շրի համար կրուվի ելած Կոշեցիներին, այնպիսի պտուղ չէին, որ չկոխած Թալինցիներին ջուր տային ու այն էլ ձրի՝ Թալինը, որ կարիք ու հնարավորություն ունեւ հաղթված Կոշի շրի մի մասն օգտագործելու, այն ձեռք է բերում գնելով: Տեղի ունեցավ առուծախ, շրի՝ առուծախ: Թալինը վճարեց հաղթողներին, ուստի և սրանք շրի մի մասը

ԹԱՆԻ ԿԱՃԱՌԵՅԻՆ

ժ

Սակայն «կալու զկոշավանականն» ու «Թալնի վաճառեցին» խոսքերի առանձնում եղած հատվածը գեռ պարզ չէ. արձանագրում կարդում ենք.

«կալավ զկոշավանականն և ի Քրթավանին ընդ անկին մին Թալնի վաճառեցին»:

Ի՞նչ են նշանակում ընդգծածս բառերը:

Որքան էլ որ ստույգ լինի, թե Քրթավան տեղանուն է, շինանիստի անուն, այն դեռ չէ պարզում հատվածի իմաստը: Չի պարզում Կոստանյանի այն ներմուծությունն էլ, որով նա «անկին» բառը մեծատառ գրելով՝ հասկանում է իբրև հատուկ անուն: Կոստանյանի ուղղումը մտցնելով էլի ստանում ենք մի մուլթ խոսք:

«Ի Քրթավանին ընդ Անկին մին Թալնի վաճառեցին»:

Աճառյանն «անկին» բառը հասկանում է «անարժեք» իմաստով՝ և ամբողջ պարբերությունը վերջնական կերպարանքով հասկանում է այսպես. «Զուրի կոիվ մը եղած է Արուճի, Կոշի ու գավառի միջև. Արուճը զարկեր է Կոշն ու գավառը. Կոշի վանքին վանականներն ու Քրթավանքին վանականները ստիպվել են դատարկ անարժեք (այսպես պետք է հասկնալ անկին բառը) թաժով մը ծախել իրենց ջուրը. Գրիգորը եկել, նախկին կարգը վերականգնել է»:

Մենք տեսանք, որ կարծեցյալ պարտված վանականները չէին ծախողները, որ ստիպված լինեին դատարկ անարժեք բանով ծախելու իրենց ջուրը: Սախողները հաղթական Արուճցիք էին, և որովհետև սրանք ստիպված չէին կարող լինել, քանի որ հենց իրենք էին զոռ անողներն, անհերքելի է, որ Արուճցիք դատարկ անարժեք բանով չէին ծախիլ այն կովախնձորը, որ արյուն թափելով էին ձեռք բերել:

* Նրա «Արմատական բառարանում» չկա այս «անկին» բառը:

Հապա ի՞նչպես կարելի է լուծել այս առեղծվածը:

Մենք առաջարկում ենք հատվածի մի բոլորովին նոր վերծանություն՝ կարգավոր ոչ թե թի Բրթավանին ընդ անկին մին թանի վաճառեցին», այլ թի Բրթավան ինքն՝ դանկին մին թալնի վաճառեցին»:

Արձանագրից իմանում ենք, որ ամբողջ ջուրը բաժանվելիս է եղել երկու անհավասար մասերի. 1 բաժինը տրվել է Արուճին, իսկ $1\frac{1}{2}$ բաժինը՝ Կոշին ու գավառին:

Միևիթար Գոշից ե այլ աղբյուրներից մեզ հայտնի է, որ բաժանման ենթակա որևէ գույք կամ հասանելիք ընդունվում էր իբրև միավոր և բաժանվում վեց մասի, որոնցից յուրաքանչյուրը կոչվում էր դանկ: Այս հաշվով գույքային, կայքային, կալվածային որևէ ամբողջ, հավասար էր վեց դանկի: Վաճառելիս, նվիրելիս, կտակելիս միշտ նշում էին, թե գույքի որ մասի կամ քանի դանկի մասին է խոսքը: Ասում էին, օրինակ, վեց դանկ գույք, հինգ դանկ ջրաղաց, չորս դանկ այգի, երեք դանկ ձիթհանք ևլն:

Ահա այս հաշիվն էլ հենց լուծում է արձանագրի մութ հատվածը: Այս հաշվով եթե արտահայտենք Արուճի ու Կոշի ստացած ջրաբաժինները, կտեսնենք, որ Արուճին հասնում էր $1 = 6/6 =$ վեց դանկ ջուր, իսկ Կոշին $1\frac{1}{2} = 9/6 =$ ինն դանկ ջուր:

Արուճցիք, իբրև հաղթող, տեր էին դարձել Կոշի ամբողջ ջրին. այսինքն՝ ինն դանկին էլ: Ինչ արին նրանք Կոշեցիների ջրի ինն դանկից ութը, չի ասված: Հավանորեն, մասամբ իրենք յուրացրին, մասամբ է, գուցե թողին հենց իրեն Կոշին ու գավառին:

Իսկ մնացած մեկ դանկը:

Այս ինն գանկից մեկ դանկի մասին պարզ ասված է, թե ինչ արին: Կոշի գավառում էր նաև Քրթավանը, որը ջուր ստանում էր Կոշի հետ միասին, Կոշի գավառի ընդհանուր բաժնից, $1\frac{1}{2}$ մասից կամ 9 դանկից: Քրթավանին հասնում էր մեկ դանկ ջուր, ինքն դանկին մին»: Ահա հենց այս Քրթավանին հասնող մեկ դանկ ջուրը, որ կարող էին օգտագործել ոչ թե Արուճցիք, այլ Թալինցիք (կամ թե՛ ոչ միայն Արուճցիք, այլ նաև Թալինցիք), դառնում է առուծախի առարկա: Հաղթող Արուճցիք Քրթավանի մեկ դանկ ջուրը ծախում են Թալին գյուղին:

Արձանագրի հիշյալ ամբողջ պարբերությունը մեր մեկնաբանությամբ ներկայանում է այս կերպարանքով:

«Կոշի եղավ Արուճի ու Կոշի գավառի միջև. Արուճը զարկեց (նաղթեց) Կոշին ու գավառին և տիրացավ Կոշավանի ջրին, և Քրթավանի ջուրը, որ ինն դանկից մեկն էր, Թալինին վաճառեցին»¹⁰:

* Թող զարմանալի չթվա, որ ինն բառը դրված է ը-ով, ինքն (հմտ. «Շողակաթ», էջ 175, Արուճ, 670 թ. «Ի ձեռն Գրիգորի Մամիկոնի հայոց իշխանի և Հեղինեի նորին զուգակըցի»):

10 Բ. Ավդալբեգյանը աշխատության վերջում առանձին թերթի վրա տվել է արձանագրության «Գիտական վերապատումը», ինչպես ինքն է նշում՝ «Գիտական переклад»-ը: Ստորև բերում ենք այն:

Գիտական վերապատումը

Հայոց 316 թվականին (այսինքն՝ 867 թվականին, ապրիլի 24-ից հետո) Աշոտի իշխանության, Հայոց սպարապետ Բագրատունի Սմբատի կալվածատիրության ու Զաքարիայի կաթողիկոսության ժամանակ կոշի եղավ՝ մի կողմից Արուճի և մյուս կողմից Կոշի ու գավառակի (գյուղախմբի) միջև Արուճը զարկեց, զոռ արեց Կոշին ու գավառակին (գյուղախմբին) և տիրացավ Կոշավանի ջրին, իսկ Քրթավանին հասանելի ջուրը, որ ինն դանկից մեկ գանկն էր, ծախեցին Թալին գյուղին: Ես՝ Վառամի որդի Գրիգորս, Բագրատունի Սմբատի ծառաս, Սմբատի հրամանով եկա և կիսեցի ջուրը Կոշի ու Արուճի միջև՝ իրենց հնուց սահմանված կարգի համաձայն, որ այս է. ջրի 1 ու $\frac{1}{2}$ մասը Կոշին ու 1 մասն Արուճին: Արդ՝ եթե որևէ մեկն այս կարգադրությանը հակառակել աշխատե կամ ավելի պահանջ հարուցի, 318 հայրապետներից նշովված լինի և Սմբատից էլ մահապատժի կարժանանա: